№ 19 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10

1905

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—5 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

№ 19 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համակրական քայլ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ո՞վ է մեղաւորը. Բագուի արիւնհեղութիւնը. Մամուլ. Նամակ Մադրասա գիւղից. Կարխանիում գրքի առիթով. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՄԱԿՐԱԿԱՆ ՔԱՅԼ

«Մշակի» մէջ մենք հաղորդեցինք, որ Թիֆլիսի քաղաքագլուխը դուժայի մի քանի ձայնաւորների հետ միասին մի փորձ արին ժողովելու Հալլաբարի ազգաբնակութեան ներկայացուցիչներին և նրանց հետ միասին խորհրդակցելու քաղաքի ծայրերի անհրաժեշտ կարիքների մասին։

Փորձը դուրս եկաւ շատ ուսանելի և օգտակար։ Ժողովված բազմաթիւ հասարակութիւնը ցոյց տուեց մեծ լրջութիւն յարուցած հարցի վերաբերութեամբ և կարողացաւ շատ որոշ կերպով մատնացոյց լինել իր գլխաւոր կարիքների մասին։ Հալլաբարի ներկայացուցիչները առաջ բերին կարևոր կէտեր, որոնք վերաբերում էին թէ կրթական գործին, թէ բժշկական օգնութեանը և թէ հաղորդակցութեան քարուքանի։

Հալլաբարը և նրա հետ կից տեղերը, որոնք ունեն մօտ 50,000 հոգի բնակիչ, չունեն դպրոցներ։ Նոյն իսկ ստորին ուսումնարաններ բացակայում են այդտեղ։ Հալլաբարցին ստիպված է իր զաւակներին ուղարկել Կուր գետի աջ ափում գտնվող ուսումնարանները։ Այդ պատճառով ժողովը ցանկութիւն յայտնեց, որ Հալլաբարում բացվի գիմնազիա, կամ պրոգիմնազիա զուգընթաց դասարաններով։

Բժշկական օգնութիւնը նոյնպէս շատ անմխիթարական վիճակի մէջ է։ Բժիշկների մեծագոյն մասը ապրում է քաղաքի հարուստ մասում և նոյն իսկ քաղաքային այն բժիշկը, որ նշանակված է Հալլաբարի համար, ապրում է Հալլաբարից դուրս։ Այդ պատճառով հասկանալի է, որ Հալլաբարի ներկայացուցիչները ցանկութիւն յայտնեցին քաղաքի այդ բազմամարդ մասի բժշկական օգնութեան գործը տեսնել աւելի լաւ կազմակերպված։

Հաղորդակցութեան թերութիւնները դժուարացրել են Հալլաբարի յարաբերութիւնները քաղաքի միւս մասերի հետ։ Իսկ դա խանգարում է շատ գործերի առջող ընթացքին։ Եւ հասկանալի է թէ ինչու հալլաբարցիները պնդում էին, որ քաղաքը արագացնէ քաղաքի այդ մասը ելեքտրաքարշով միացնելու քաղաքի միւս մասերի հետ և միջնորդելու, որ Հալլաբարում բացվի երկաթուղու գծի վրա կիսակայարան։

Մեր լիշած ժողովի հրաւիրելը սկզբունքի տեսակէտից մի լաւ քայլ էր։ Դա առաջին փորձն էր, որ քաղաքի գործերի ղեկավարները անմիջական շփման և խորհրդակցութեան մէջ էին մտնում ժողովրդի հետ։ Եւ ինչպէս տեսանք, այդ քայլը բարի հետևանքներ տուեց։ Ցանկալի է, անշուշտ, որ և ապագայում այդ փորձը ունենար իր կրկնութիւնները և նպաստէր քաղաքի ազգաբնակութեան կարիքների ուսումնասիրութեան, անմիջական յարաբերութիւններ ստեղծելով ժողովրդի հետ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ո՞Վ Է ՄԵՂԱՒՈՐԸ

Տարիների ընթացքում մի սարսափելի թոյն էր պատրաստվում մեր երկրում։ Ազգամոլութեան, օտարակերութեան, փոխադարձ թշնամութիւնների թոյնը։

Սևանայ այն օրը, երբ առաջին անգամ մեր երկրում բարձրացաւ այդ գազանային ձայնը։

Այս աղաղակն է այսօր դուրս թռչում վիրաւոր, յուսահատ սրտից՝ Բագուի սարսափների ազդեցութեան տակ։

Իզուր էին լաւագոյն մարդիկ քարոզում համերաշխութիւն, փոխադարձ յարգանք, եղբայրական վերաբերմունք յանուն մեր երկրի կուլտուրական և քաղաքակրթական ապագայի։ Իզուր բողոքում էինք գազանական կրքի պատուաստող մանուլի դէմ. իզուր մերկացնում, անարդ սիւնիք էինք բեռնում այն փարիսեցիական արարքները, որոնց տակ թագնվում էր ամբոխի ստոր ֆանատիկոսական ընազդները շոյելու դիւական նպատակը։

Մենք հաւատում էինք, որ ապրում ենք քսաներորդ դարում։ Մենք սիրում էինք ոգեւորվել այն յոյսով, որ միջնադարեան մութերն ու գաղափարները թաղված են անդառնալի կերպով, որ համամարդկային քաղաքակրթութիւնը կը տրորէ, կոչնչացնէ բոլոր խաւար, գազանային ջանքերը։

Այսօր տիւռ, սևաթոյր իրականութիւնը գալիս է մեզ պատասխանելու իր ահռելի փաստերով, մեր վարդագոյն յոյսերը, մեր անշէջ հաւատը արեան մէջ խեղդելու։

Եւ մենք այսօր կանգնած ենք կորագլուխ։ Միայն ողբալ կարող ենք այդ կարմիր իրականութիւնը, ողբալ մեր արիւնոտ սրտի բոլոր թելերով։

Խոստովանում ենք. դժբախտութիւնը չափազանց ահաւոր է, չափազանց հրէշաւոր կերպարանք ունի։ Նա թուլացնում է միտքը, կօշմարի պէս խեղդում է ամեն մի ազնիւ մարդուն, որ կը կամենար տեսնել իր հայրենի երկրի խաղաղ, անդորր առաջադիմութիւնը՝ յենված մի ընդհանուր համերաշխութեան, ազգերի և լեզուների միաբան գործակցութեան վրա։

Ներկայ ծանր, խեղդող դրութեան մէջ յուզված, շփոթված միտքը ուզում է իմանալ թէ ով է մեղաւորը։

Այս հարցը ծագում է բոլոր հարցերից առաջ, ծագում է ինքնաբերաբար, արտասուելի իրերի անողոք լոգիկայով։

Ասել թէ մեղաւորը այն անհատներն են, որոնք կռուել են իրար հետ, սպանել են միմեանց—կը լինէր միամտութիւն։ Այդպիսի դէպքեր երէկ և այսօր չէին ծագում։

Ո՞վ է մեղաւորը։

ԲԱԳՈՒԻ ԱՐԻՒՆՀԵՂՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիսի քաղաքագլուխ Վերմիշեանը ստացել է երէկ Բագուից, Ֆ. Վեզիրովից հեռագիր, որ յայտնում է թէ հայ և մահմեդական հոգևորականութիւնը նահանգապետի հետ միասին թափորով անցնում են փողոցից փողոց և հանգստացնում ժողովրդին։

Ֆանատիկոսութեան անզուսպ արտայայտութեան շնորհով ազգաբնակութեան մահմեդական մասի կողմից, Բագուի բնակիչների վիճակը քանի գնում աւելի է ծանրանում։ Սակաւաթիւ զօրքի, նոյնպէս և ուժեղացրած կազակ պահակախմբերի ներկայութիւնն անկարող են զսպել բոլորովին գազանացած մարդկանց գրգռված կրքերը։ Երկրորդ օրն է, որ փողոցներում հրաձգութիւնը չէ լռում։ Առանց լուրջ բիսկի փողոց դուրս գալն անհնար է։ Բոլոր ազգաբնակութեանը պատել է զարհուրանքը։ Ասում են, որ քաղաքի փողոցներից շատերում ընկած են սպանվածների դիակները։ Բոլոր պաշտօնատեղիները, նոյնպէս և դպրոցները փակ են։ Ամբողջ քաղաքում հաց և միս ճարել չէ կարելի։ Թուրքերը մասնաւորապէս կատաղօրէն գործում են Զեմբերեքէնդ և Շամխու-ճամբայ թաղերում, ուր հայերի խանութները և վաճառատները կոտրատվում և անհետ կողոպտվում են։ Առիթից օգտվելով, չարագործները կ... պտում են տները։ Ասում են, որ Սաբունչիից մ. քանի հազար մուսուլմաններ են եկել։ Եթէ այդ լուրն արդարանայ, այն ժամանակ քաղաքի բնակիչների դրութիւնն աւելի ևս յուսահատական կը լինի։ Այժմ էլ արդէն սպանված և վիրաւորված հայերի թիւը հաշի առնելը դժուար է։ Մահմեդականները դեռ ևս խնայում են ուրիշ ազգութեան. անձերին, բայց երկիւղ են կրում խոշոր բարդութիւններից։

(Н. Об.)

—

Թիֆլիսի թեմի ս. առաջնորդը ստացել է հեռագիր Բագուից, որից քաղում ենք հետևեալը. «Երրորդ օրն է, որ Բագուում կատարվում է ջարդ հայերի դէմ մահմեդականների կողմից։ Սպանվածներն արդէն մի քանի հարիւր են, վիրաւորները շատ-շատ են։ Դիշերը քաղաքական շրջակայ գիւղերի թուրքերը։ Լուսադէմին սկսեցին կողոպտել խանութները և սպանել։ Դրութիւնը չափազանց կրիտիկական է։ Ամեն յարաբերութիւն կտրված է, նոյն իսկ հեռագրելը դժուարացած է։ Այս բոպէիս փողոցների անկիւններում դնում են մէկ-մէկ զինուոր իբր պահակ. հազիւ թէ դրանից արդիւնք դուրս գայ։ Թուրքերի ֆանատիկոսութիւնը սահման չունի»։

ՄԱՄՈՒԼ

Դարձեալ «Զեմսկի Սօբորի» մասին։ Ռուսաց ամբողջ մամուլը լիքն է այդ հիմնարկութեան նուիրված յօդուածներով և դատողութիւններով։ «Новое Время» լրագրի հրատարակիչ Սուվորին բերում է այն կարծիքը, որ այդ առիթով յայտնել է մի անյայտ, բայց, պէտք է կարծել, լաւատեղեակ խօսակից։ Ահա ինչ է նա ասել.

Զեմսկի Սօբորին վերաբերվող բոլոր գրելիքաւոր և նրանց հետ կապված ուրիշ, կողմնակի հարցերը այնքան կարևոր են, որ նրանց պէտք է վճռել նախապատրաստական լուրջ աշխատանքով, որի համար պէտք է հրաւիրել մի խմբագրական մասնաժողով, ուր, բացի ընտրված անդամներից և կառավարութեան ներկայացուցիչներից, մասնակցէին և պատմագէտներ ու ուրիշ մասնագէտներ։ Ընտրութիւնների սիստեմից կախված է Սօբորի նշանակութիւնը, և ցանկալի էր, որ այդ աշխատանքը շտապով չը կատարվէր։

Ներկայացուցչութեան առաջին փորձը չը պիտի անաջողութեան հանդիպէ, ուստի ամեն ինչ պիտի համաչափվի լուրջ և բարձր նպատակների հետ։ Իսկապէս, լաւագոյն մարդիկ պիտի կազմեն Սօբորը։ Ի հարկէ, կասեն թէ նա սարքված է, բայց այսպէս խօսում է իւրաքանչիւր պատգամաւորների ժողովի մասին նրա փոքրամասնութիւնը։ Անպատճառ կը լինի կուսակցութիւնների ագիտացիա, բայց կառավարութիւնն էլ, ի հարկէ, չի քնի։ Սօբորի մէջ պիտի լինեն հողի, հողագործութեան և հողատիրութեան, առևտրի, արդիւնագործութեան և գիտութեան ներկայացուցիչներ։ Թէօրետիկներ շատ կան և ժամանակի մէջ, որ նշանաւոր չափով կը զարգանայ և կը ներկայացնէ բոլոր կարծիքները, ամեն մի ազատ կրիտիկա։ Որքան շատ տեղեր կը լինեն ընտրութիւններով շահագրգռված, այնքան լաւ։ Որքան մեծ կը լինի Սօբորը, այնքան նա աւելի լաւ կը ներկայացնէ երկիրը և այնքան հանդարտ ու կենսունակ կը լինի։ Բուն ազգաբնակութիւնը, որ կազմել է ռուսաց պետութիւնը, ի հարկէ տիրապետող կը լինի։ Արդարացի կը լինէր մի քանի տեղեր և ազգութիւններ համարել նոյնպիսի առանձնակի շրջաններ, ինչպէս Ամէրիկայի Միացեալ Նահանգներում բուն նահանգներից զանազանվելու համար է անվում։ Մենք աւելի ծանր պայմաններում ենք գտնվում, քան Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան և Իտալիան, ուր ազգաբնակութիւնը անհամեմատ աւելի միակերպ է և ուր գաղթականութիւնները ցրված են աշխարհի զանազան մասերում։ Մեզ մօտ մայրը և կիրը և գաղթականութիւնները մի տեղ են, մի դաշտավայրի վրա, եթէ չը հաշվենք լեռնային տեղերը, որոնք աննշան են՝ համեմատած պետութեան ընդհանուր տարածութեան հետ։ Ազգութիւնների թիւը շատ մեծ է։ Հնարաւոր է, որ Սօբորում, բացի եւրոպական տարազով կազմված կուսակցութիւններից — պանսլաւականներից, ազատամտներից, սոցիալիստներից և դրանց ստորաբաժանումներից, գոյութիւն կը ստանան և ազգայնական կուսակցութիւններ. լեհական, լիտվական, մալորոսական, հայկական, թուրքական, վրացական, հրէական, սիբիրական, օսազէյական, լատիշական և այլն։ Դա մեր ծանր առանձնայատկութիւնն է, որ մի փոքր յիշեցնում է Աւստրիան և այս առիթով նախապատրաստական աշխատանքը շատ նկատումներ պիտի ունենայ աչքի առաջ։

Հաւանականօրէն պէտք կը լինի բաժանել պետութիւնը ոչ միայն ընտրողական շրջանների, այլ և նահանգների, և նկատի առնել ազգութիւնների փոխադարձ պատմական, աշխարհագրական և ազգագրական յարաբերութիւնները, որպէս զի ռուսական տարրին մի յայտնի չափով ազդեցութիւն տրվի։ Անհրաժեշտ պայման է ռուսաց լեզուն իմանալը, որովհետև ուրիշ որ և է լեզու չէ կարելի թոյլ տալ վիճաբանութիւնների մէջ։ Պատգամաւորների ընտրութեան մէջ դեր չը պիտի խաղայ կրթական ցենզը։ Անգրագէտ գիւղացին ունի մի և նոյն իրաւունքը, ինչ որ բարձր զրթութիւն ստացած մարդը։

Ապա յօդուածագիրը, ընդունելով, որ Ռուսաստանի ազգաբնակութիւնը 140 միլիոն է, ասում է թէ, ուրեմն, պատգամաւորների թիւը, հաշուելով իւրաքանչիւր 100 հազարին մի պատգամաւոր, կը լինի 1400։ Բայց սրա դէմ «Новости» լրագիրը նկատում է, որ ազգաբնակութեան այդ թիւից հազիւ լինի 30 միլիոն ընտրողական իրաւունք ունեցող (չը հաշուելով երեխաներին, նոյնպէս և կանանց, որոնց առ այժմ ոչ մի տեղ ընտրական իրաւունք դեռ չէ տրված), ապա ուրեմն պատգամաւորների թիւը կը լինի մօտ 300։

Նկատենք, որ այս բոլորը դեռ լրագրական ասէկոսէներ են։

ՆԱՄԱԿ ՄԱԴՐԱՍԱ ԳԻՒՂԻՑ

Յունվարի 20-ին

Շամախու գաւառի 208 գիւղերից ամենամեծն է Մադրասա հայաբնակ գիւղը, որը գտնվում է քաղաքից մօտ 6 վերստ հեռու։ Այս գիւղը, որը կազմված է 700 տնից, առաջին անգամ տեսնողի վրա քաղաքի տպաւորութիւն է թողնում. բազմաթիւ երկյարկանի տներ երկաթեայ կտուրով, գիւղամիջին բազմաթիւ մանրավաճառի և արհեստաւորի խանութներ։ Ամեն առաւօտ դուրս կը տեսնէք գիւղի հրապարակում ձիերով և ֆուրգոններով կենսական սթերքներ, որ բերել են շրջակայ հայ, թուրք և մալական գիւղացիները այստեղ ծախելու։ Բնակիչներն ընդհանրապէս պարապում են այգեգործութեամբ, մասամբ և հողագործութեամբ։ Այստեղից, ինչպէս յատուկ է այլ գիւղերին, ցորեն և գարի չէ արտահանվում, այլ մաղրասեցին իր ուտելու հացը՝ ալիւր ու ցորենը գնում է գիւղի հրապարակից։ Սրանք իրանց ուշադրութիւնն ամբողջապէս դարձրել են այգիների վրա. տարվայ մեծ մասը զբաղված են այգիներն մշակութեամբ, որոնցից ստացված գինին արտահանում են Ռուսաստանի քաղաքները. մինչև իսկ Մոսկվա է վաճառահանվում Մադրասայի յայտնի գինին։ Այգիների թիւը 1000-ից անց է և բոլորը կարգին մշակված։ Մադրասեցին յայտնի է գաւառիս մէջ իր հմտութեամբ այգի մշակելու գործում։

Այստեղ կայ մի փառաւոր, սրբատաշ քարերով շինված հոյակապ եկեղեցի, որի նմանը ոչ միայն Շամախում, այլ և նոյն իսկ Բագուում էլ հայերը չունեն։ Դժբախտաբար ճարտարապետութեան հետ չէ կարող համեմատվել եկեղեցու բարեզարդութիւնը։ Նրանում շատ յետ է մնացել կանոնաւոր երգեցողութիւնը. նրանում շատ ու շատ զգալի է և կենդանի խօսքի՝ քարոզի պակասութիւնը։ Ներդաշնակ երգեցողութիւն և ուսուցանող ու մխիթարիչ քարոզ—սրանք են միայն ժողովրդին եկեղեցու հետ կապողը։ Դժբաղդաբար հէնց այս երկուսն էլ պակասում են Մադրասայում. ահա թէ ինչ է պատճառը, որ այդ

ընդարձակ եկեղեցին շատ քիչ աղօթողներ են յաճախում։

Եկեղեցուց ոչ պակաս տեղ է բռնում գիւղիս երկդասեան ուսումնարանի շէնքը (նախկին ծխական)։ Գիւղի կենտրօնում բարձրանում է նա՝ երկյարկանի փառաւոր սրբատաշ քարերով ուսումնարանը, ընդարձակ, ապակեզարդ պատշգամբով, ուսուցիչների բնակարաններով։ Շատ քաղաքների նախանձը կարող է շարժել Մագրասի այս դպրոցը։ Այստեղ սովորում են երեք պարտադնաչ ուսուցիչների հսկողութեան ներքոյ 130 մանուկներ, որոնցից 10 աղջիկներ։ Ուսումնարանը կառավարվում է գանձարանից՝ լուսաւորութեան մինիստրութիւնից բաց թողնված տարեկան 500 ր. և աշակերտներից ստացված թոշակադրամներով։ Այս տարի, շնորհիւ ուսումնարանի հոգաբարձու Ագրիեանցի, օտար երկրում ապրող մադրասեցիները նոյնպէս սկսեցին օգնել նիւթապէս, որոնցից ստացված փողը գործադրվում է աղքատ մանուկների ուսման վարձի, դասական պիտոյքների, երբեմն և հագուստի վրա. ինքը պ. Ագրիեանցն էլ իւրաքանչիւր տարի, որպէս պատուաւոր հոգաբարձու, յօգուտ ուսումնարանի տալիս է 100 բուբլի։

Մագրասան պատկանում է թուրք կալուածատիրոջ, որը աշունքներին մի քանի շաբաթ մնում է գիւղում տասանորդը հաւաքելու։ Գիւղացիներից 100-ից աւելի մարդիկ իրանց ձեռքում գտնված այգիներն արդէն գնել են կալուածատիրոջից և այժմ ազատ և ինքնագլուխ տէր են իրանց այգիներին ու արտերին։ Եթէ վաճառման ձեւականութիւնների բարդութիւնները չը լինեն, հաւանական է, որ գիւղի մնացեալ մասն էլ կը գնէ իր բաժինն ու այնուհետև թուրք աղաների մուտքն ինքն ըստ ինքեան կը վերջանայ գիւղում։

Այս գիւղից շատերն ապրում են Բագուում և Անդրկասպեան երկրում և պարապում են վաճառականութեամբ և արհեստներով, որոնց մէջ առաջին տեղն է բռնում որմնադրութիւնը։ Բագուի գեղեցկաշէն, հսկայակազմ տների մեծ մասը դուրս է եկած մադրասեցի որմնադիրների ձեռքից։

Սակայն ցաւալի է, որ մի այսպիսի հսկայ, բազմաբեղ գիւղում չը կայ մի բժիշկ և դեղատուն, որ հարկաւոր դէպքում մարդ ստիպված չը լինէր ձիւն ու բուքին, անձրև ու ցեխին դիմել քաղաք։ Զգալի է մանաւանդ պօստային բաժանմունքի կարիքը։—Նորհուրդ ենք տալիս մադրասեցիներին դիմել այս մասին առանձին խնդրագրով Բագուի նահանգապետին. յուսով ենք, վերջինս գիւղի հաստատման կարիքների լրացման մասին իր կողմից կը միջնորդէ ուր հարկն է։

Սակայն մի բան մեզ շատ է զարմացնում։ Այս գիւղը խօսում է ֆարսերէնախառն թաթի լեզուով։ Թէ ինչպէս է եղել, որ գաւառիս հայ գիւղերի մէջ Մագրասան մի այնպիսի ծայրայեղ բացառութիւն է կազմում. ինչու նա խօսում է ոչ հայերէն, որտեղից մուտ է գործել այդ լեզուն.—դեռ օրինաւոր չէ լուսաբանված։ Սակայն օտար լեզուով խօսելով հանդերձ, նա չէ մոռացել և հայերէնը, իր մայրենի լեզուն, որի համար և նախանձախնդիր է նա։ Օտար գիւղացիների հետ խօսելիս, նա մաքուր և բառական կոկ հայերէն է խօսում, իսկ միմեանց հետ՝ թաթերէն։—Ուսումնարան յաճախող նորեկ աշակերտները կարդին հայերէն չեն հասկանում։ Կան մի քանի ընտանիքներ, որտեղ չեն գործածում թաթերէն լեզուն. բարեբաղդաբար այս վերջինների օրինակին հետևողներն հետզհետէ շատանում են։

Զարմանալի է մի այլ երևոյթ ևս։ Զը նայելով, որ այստեղ ընթերցողների մի մեծ խումբ կայ, սակայն անցեալ տարի ստացվում էր միայն մի օրինակ «Մշակ», որը ձեռք ց ձեռք անցնում էր ու պտոյտ գալիս ողջ գիւղում մինչև հետևեալ համարի ստացվելը։ Փառք Աստուծու, ընթերցողների մէջ մեծ մասը ունեւոր անձինք են և Մագրասայում ոչ թէ մի, այլ տասից աւելի «Մշակ» կարող էր տարածվել։ Այս երևոյթը պարզ ապացոյց է, որ մադրասեցին դեռ հեռու է մտաւոր սնունդ ստանալու համար նիւթական զոհողութիւն անելու ընդունակութիւնից։

Յով. Քօսեան

ԿԱՐԽԱՆԻԴՈՒ ԳՐՔԻ ԱՌԻԹՈՎ

—

Ղուբայից Յ. Գրիգորեանը «Մշակի» միջնորդութեամբ հայ ուսուցիչներին աւետում է մի «գեղեցիկ» դասագրքի լոյս գալը, որի վերնագիրն է—Карханиди. «Живое Слово». Элементарный учебникъ русскаго языка по нагляднно-переводному методу для армянскихъ училищъ.

Այս գիրքը աչքով չեմ տեսել, ուրեմն հաւատով միայն ընդունում եմ պ. Գրիգորեանի գովասանքը, թէ այն աւելի լաւ է, քան, զօրօրինակ, Вольперъ-ի խիստ տարածված դասագիրքը, որ շատ մատաղ մանուկների հոգին է հանել։ Բայց պ. Գրիգորեանը գրքի հետ և մի մեթոդ է հռչակում, որից որ պարտք եմ համարում զգուշացնել մեր ուսուցիչներին։ Ուստի խնդրում եմ «Մշակի» խմբագրութիւնից ինձ հնար տալ կարծիքս յայտնելու։

Պ. յօդուածագիրն ասում է, թէ յիշեալ դասագիրքը երեք տեսակի է յարմարեցրած—հայ, վրացի և յոյն երեխաների համար։ Անտարակոյս, այդ խօսքն այնպէս պէտք է հասկանալ, թէ եթէ Կարխանիդին ունի զօրօրինակ հետևեալ նախադասութիւնը.

Митя отправился въ лѣсъ,

սրա յունարէնը կը լինի—

Միխայլոս էլթէն էյս ճիլէն,

վրացերէնը կը լինի—

Միխեյլա ծաւիդա տդեճի,

Իսկ հայերէնը... բայց հայերէն թարգմանութիւնը կատարել է Գիւտ քահ. Աղանեան և ստուգել է Ղազ. Աղայեան։ Արդ ենթադրենք, թէ Գիւտ քահանան նոյն նախադասութիւնն այսպէս է թարգմանել.

Միքայէլը ճանապարհ ընկաւ դեպի անտառը. Աղայեանը այդ թարգմանութիւնը տերտերական համարելով՝ իր ըէֆորմատօրական գրչով կը ջնջէ և տեղը կը դնէ.

Միսօն կամ Մուռիկը գնաց անտառ։

Եթէ այս է Կարխանիդու переводный методъ ը, մենք բացէիբաց մերժում ենք այդպիսի հոգեսպան գործը։ Եւ ոչ միայն այն պատճառով, որ թարգմանութիւնն անդադար սխալներով պիտի լցվի, որովհետև այդ ուղղութեամբ սխալների կուտակվիլը շատ բնական է։ Այդ մեթոդով սովորած աշակերտը, նոր թարգմանածը վերստին ընագրի վերածելով, հիմի կասի. М. пошелъ въ лѣсъ (пошелъ отправился իբարից չը զանազանելով), որով կը հաստատէ, թէ «գնաց» չի նշանակում отправиться։ Այս ռուսերէն բառը մի նրբութիւն ունի, որ իսկոյն երևան է գալիս հետևեալ շարքից. отправиться, направиться, переправиться, справиться, управиться և այլն, որ և, նրբութիւնը, քահանայի թարգմանութեան մէջ փոքր ինչ ճշգրտութեամբ արտայայտվել է—ճանապարհ ընկաւ, յուղի անկաւ, իսկ ըէֆորմատօրական գրիչը այդ թարգմանութիւնը չը հաւանելով, յօնքի տեղ աչք շինեց։ Որպէս զի отправиться ճշգիւ արտայայտվի, մեր կարծիքով դեռ էլի հեռու պէտք է գնալ և ասել.

Միտեան վեր կացաւ (տեղից, գիւղից—отъ) և անտառի ճանապարհը (ուղղութիւնը) բռնեց։

Սակայն գիտեմ, որ թարգմանութեան այս ձևը հերետիկոսութիւն պիտի համարվի։ Մեր միտքն էլ այն չէ, որ այստեղ պնդենք, թէ թարգմանութիւններից որն է ճիշդը, այլ թէ բառարանական թարգմանութիւնը, յամենայն դէպս, ոչ միայն գայթակղեցուցիչ և վիճելի է, այլ կաշկանդող սպանիչ գործ է։ Հապա որն է հոգոյ կապանքները արձակող, միտքը բաց անող թարգմանութիւնը.

Մանկավարժութեան մէջ մինչև այսօր մի գլուխ պակաս է մնացել, այն է, թէ դպրոցներում օտար լեզուն ինչպէս պէտք է ուսուցանել մանուկներին, շատ վաղ։ Եւ հասկանալի է պակասութիւնը, որովհետև ոչ գերմանացին, ոչ ֆրանսիացին, ոչ անգլիացին, ոչ ռուսը կարիք չունեն շատ վաղ սկսելու օտար լեզուի ուսուցումը. նրանք նախ իրենց մայրենի լեզուի հիմքն են պինդ հաստատում, և այս հերիք է իրանց։ Մեզ համար աւելի հեռաքրքրական պիտի լինէին Սիլեզիայի լեհերի և Ալզաս-Լոտարինգի ֆրանսիացիների հանգամանքները, որոնք պարտաւորվում են վաղ սկսել գերմաներէնի ուսումը, բայց որովհետև այդ գործում խառն է քաղաքականութիւնը, մանկավարժութիւնը շատ չի շահվում այդպիսի կոպիտ փորձից։

Թերևս միայն մի անկիւն կայ Եւրոպայում, ուր որ անխտիր բոլոր մանուկները շատ վաղ են գործ ածում մի անգամից 2, բայց նաև 3 լեզու,—այդ է Զուիցերիան։ 6—7 տարեկան փոքրիկները ազատ խօսում և գործ են ածում, զոր օր. Ցիւրիխի գիւղական դպրոցներում—կրականական գերմաներէնը և տեղական բարբառը, իսկ շատ անգամ նաև ֆրանսերէնը։ Երևակայեցէք, որ դուք Թիֆլիսի հայոց ուսումնարաններում լսէք մաքուր գրականական (Պռօշեանի կամ Աղայեանի) լեզու և այնպիսի ընտիր (Սունդուկեանի) տեղական բարբառ, որով աւելի հասկանալի ձևով է արտայայտվում Դարվինի տեսութիւնը, քան մեր ինտելիգէնտների անքանքող, անզօր, վատոյժ, իբրև թէ գրական հայերէնով։ Արդ, ինչով է հանում Զուիցերիան այդչափ կատարելութեան. հրաշքով։ Բայց և այնպէս այդ հրաշքի մի բացասական հնարը մատնացոյց անել կարելի է, այդ այն է որ այն տեղի ուսուցիչները երբէք բառարանական թարգմանութեան չեն դիմում։ Մեր դասերը—հա բառարան, հա բառարան են, իսկ նոցա դասերին բառարանն խպառ բացակայում է. հրաշք չէ, բայց ինչ է։ Ափսոս որ յօդուածը երկարում է և մենք ստիպվում ենք մեր կարած թելը նորից կապել, զէթ թեթև ակնարկներով հասկացնելու բանի զօրութիւնը։

Այժմ արդէն մի անհերքելի ճշմարտութիւն է համարվում, թէ օտար լեզուի հիմքը մայրենին պիտի լինի. բայց արդեօք շատերն են ըմբռնում այդ խօսքի բուն իսկութիւնը, արդեօք պնդասիրութիւն չէ՞ մայրենի լեզուին այդչափ շուք տալը։ Կարծես թէ ապացոյց էլ կայ այդ բանի համար։ Մեր որ օտար լեզուի ուսուցիչը մայրենի լեզու չի գործածում իր դասերի ժամանակ (հարկաւ բառարանական լեզու), բայց ինչու մեզանում չեն բարգաւաճում օտար լեզուները (ռուսերէնը, ֆրանսերէնը և այլն). ուրեմն ինչ շահ բերեց մայրենի լեզուն։ Անշուշտ, այսչափ անյաջողութիւնը մի արմատական պատճառ պիտի ունենայ։ Մենք միշտ մթութեան մէջ կը խարխափենք, քանի որ ամենապարզ խնդիրների լուծումը չենք փորձի։ Վեր առնենք հենց այսպիսի ամենաէական խնդիր, որ մերոց համար խնդիր անգամ չէր։ Հարցնում ենք. թարգմանելիս ինչ ուղղութիւն պէտք է բռնել, արդեօք հայերէնից—օտարին, թէ օտարից—հայերէնին պէտք է ընթանալ։ Համարձակվում ենք իբրև մի նոր յայտնութիւն ծանուցանել, թէ անպատճառ պէտք է միշտ ճայերէնից սկսել գործը, ապա թէ ոչ արդիւնքը ողբալի կը լինի։ Ուրեմն մեր ամենայի պատուտակը աջ թէ ձախ պտտուի, անա մեծագոյն գաղտնիքը։ Որքան պարզ միջոց—մտաւոր մեծագոյն աւերածումներից ազատ մնալու համար։

Այդ բանի պատճառն էլ պարզ է։ Դեռնին յանձնված սերմը չի աճի, եթէ հողը պարարտութիւն և ջուր չունենայ. մարդու միտքը նոր աշխարհահայեացք (ուրեմն և նոր լեզու) չի ընդունի, եթէ հինը պարարտ չը լինի և բռնելու այժ չունենայ։ Մտքի աշխատաւորութիւնը օտարները կոչում են ապպերցեպցիա, մենք պարզ կը կոչենք մտաբացութիւն։ Արդ, միտքը երբ է բաց նոր լեզուն ըմբռնելու համար։ Այն ժամանակ, երբ որ մանուկի մտքի մէջ պատրաստ աշխարհահայեցողութիւն կայ։ Ահա այս է մայրենի լեզուի հոգեբանական անհրաժեշտ հարկը օտար ուսուցման համար։ Այս համոզմամբ, արդարև կարելի է պնդել, թէ մայրենի լեզուն իրօք հաստատուն հիմք է օտարի համար։ Եթէ մինչև այստեղ ասում էինք, թէ ուսումը որ բառից պէտք է սկսել—արդեօք հայերէնից թէ օտարից, այսուհետև պէտք է ճշդենք խօսքը և ասենք, թէ որ աշխարհահայեցողութիւնից պէտք է սկսվի ուսումը—մայրենի թէ օտար աշխարհահայեցողութիւնից։ Եւ պատասխանում ենք անշուշտ մայրենի հայեցողութիւնից։ Ով որ հակառակ ուղղութիւն է բռնում, նա հոգեսպան տաղտկալի ապարդիւն գործ է կատարում։

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսի ոստիկանապետ Գ. Ս. Կօվալեօվը, քաղաքային դումայում ձայնաւոր Սվեշնիկօվի և իշխան Արղութեան-Երկայնաբազուկի արած յայտարարութեան առիթով, մի նամակով դիմել է Թիֆլիսի քաղաքագլխին։ Յիշված ձայնաւորները յայտարարեցին, որ ոստիկանութիւնը և նրանց հետ էլ դռնապանները ծեծում են քաղաքային ուղրավայի գործակատարներին։ Ոստիկանապետն իր նամակում բերում է բազմաթիւ փաստեր, որ այդպիսի բան չէ եղել և աւելացնում է. «բոլոր վերեւում յիշվածներն աչքի առաջ ունենալով, իմ կարծիքով, և կատարված քննութիւնների համաձայն լապտեր վառողներին ոստիկանութեան ծառայողների տուած ծեծի մասին—ծագած գործը պէտք է ընդունել իբր հետևանք հասարակ թիւրիմացութեան։ Հաղորդելով այդ մասին դումայում զեկուցանելու համար, պարտք եմ համարում յարակցելու, որ, չը նայելով այդ բոլոր փաստերին, այնու ամենայնիւ բոլոր քննութիւնը ես յանձնում եմ պ. նահանգապետի բարեհաճութեանը»։ (Кав.)

—

Փետրվարի 7-ին Թիֆլիսում վախճանվեց «Բօզարճեան» ծխախոտի յայտնի գործարանի հիմնադիր Ն. Ի. Բօզարճեանը, 75 տարեկան հասակում։ Հանգուցեալը ընիկ արարկերցի էր և մանկութեան օրերում գալով Թիֆլիս, կարողացել էր իր եռանդով, աշխատութեամբ հիմնել ծխախոտի գործարան և լայն առևտուր։ Հանգուցեալի ժառանգները «քնէլէ» կոչված ՁԼասակար սովորութեան փոխարէն վճռեցին նուիրել 1000 բուբլի գանազան բարեգործական նպատակների համար, այն է. 1) Քաղաքային գիշերային ապաստարանի օգտին 100 ր. 2) Հայոց Բարեգործական ընկերութեան Թիֆլիսում 200 ր. 3) Հայուհեաց Բարեգործական ընկերութեան 200 ր. 4) Կոյրերի դպրոցին 100 ր. 5) Ներսիսեան դպրոցի չքաւոր աշակերտների ուսման վարձ 100 ր. 6) Քահանաների գանձարանին 50 ր. 7) Էժանագին ճաշարանին 50 ր. 8) Էժանագին գրադարանին 100 ր. 9) 5 օրինակ «Մշակ», 3 օրինակ «Մուրճ», 8 օր. «Առողջապահիկ թերթ» ձրի տարածելու չքաւոր գրադարաններին 100 ր.։

—

Գրական ֆոնդի տարեկան ընդհանուր ժողովում (Պետերբուրգում) Վլ. Կորոլենկոն առաջարկել է ժողովին միջնորդել, որ թեթևացնեն ռուս յայտնի գրողներ՝ Մ. Գորկու, Պեշեխոնովի, Գուրեվիչի և Սոլոմինի վիճակը, մանաւանդ առաջին երկուսինը, որոնց թոյլ առողջութիւնը լուրջ երկիւղ է ներշնչում, ժողովը միաձայն արձագանք տուեց այդ առաջարկին։ (Р. Вѣд. Русь)

—

Մենք ստացանք հետևեալ նոր գրքերը. 1) Նորածին Մանուկը, պատմված Նար-Դոսի, Վաղարշապատ, 1904 թ. գինն է 3 կ.։ 2) Համառօտ ստուգաբանութիւն հայոց աշխարհաբար լեզուի, Յարութիւն Թումանեանի, Թիֆլիս, 1904 թ. գինն է 40 կ.։ 3) Ցանցաւոր մօր խոստովանութիւնը, Արման Սիլվեսարի և Մարսել Պրէվօի, թարգմանութիւն, Թիֆլիս. 1905 թ., գինն է 5 կ.։ 4) Որբ Անտուն, Կլ. Լուկաշեվիչի, թարգմանութիւն, Թիֆլիս, 1904 թ., գինն է 12 կ.։

—

Ինչպէս յայտնի է Պետերբուրգում կազմված էր դեռ ձմեռվայ սկզբից մի յանձնաժողով ըզբաղմունքի հարկ մտցնելու հարցը քննելու համար։ Այդ յանձնաժողովը քննութեան առաւ օրինագծի միայն 101 յօդուածները, իսկ մեծագոյն մասը կիսատ մնացած, դեռ ևս զեկուցումների վերջերին փակվեց։ Հարցը յետաձգված է առնուազը մի տարի ժամանակով։

—

Թիֆլիսի IV քաղաքամասի պրիստաւ Բաչուրինը նշանակված է VII քաղաքամասի պրիստաւ, իսկ VII մասի պրիստաւ Գօմելաուրին տեղափոխված է Բաչուրինի տեղը։

—

Փետրվարի 2-ին, ցերեկվայ ժամը 12-ին Պետերբուրգի համալսարանի շէնքում կայացաւ ուսանողների ժողով, որպէս զի լսեն ռեկտորի պատասխանը։ Պատուիրակները հաղորդեցին ժողովականներին, որ ռեկտորի խօսքերով իշխանութիւնը ոչնչով դէմ չէ համալսարանների ուսանողների ընդհանուր ժողովին։ Ժողովը կայանալու է փետրվարի 7-ին, ցերեկվայ ժամը 12-ին, համալսարանի մեծ դահլիճում։ Նրանում մասնակցելու են թէ ուսանողները և թէ պրոֆէսորները, նրանց օգնականները և այլն։ (Русь)

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են նորից, որ ս. սինոդի աւագ պրոկուրոր Կ. Պ. Պոբեդոնոսցեվի առողջութիւնը սաստիկ վատացել է. նա բոլորովին զրկված է պետական գործերում մասնակցութիւն ունենալու հնարաւորութիւնից։

—

«Lok. Anz.» լրագրին հաղորդում են, որ Ս. Իւ. Վիտտէն մօտ ապագայում մտադիր է հրաժարվել քաղաքական գործունէութիւնից։ Նա այդ չէ արել մինչև այժմ այն պատճառով, որ նրա վրա դրված էին պետական կարևոր յանձնարարութիւններ։ (Слово)

—

Վարշավայից հաղորդում են «Echo de Paris» լրագրին, որ գործարանատէրերը և բանուորները համաձայնութեան եկան հետևեալ պայման-

ներով. 9 ժամվայ բանտարական օր, հասարակ մշակների օրավարձն աւելացնել 10, 15 և 20 կոպէկով, ամենանուազ օրավարձը լինելու է 75 կոպ.։ (Слово)

—

Բանտարական հարցի ուսումնասիրութեան ու մշակման համար ընտրված կոմիսսիայի նախագահ, պետական խորհրդի անդամ Ն. Վ. Շիդլովսկին ընդունեց բանտարների կողմից եկած մի պատգաւորութիւն 4 հոգուց բաղկացած։ Պատգամաւորութիւնը ներկայացրեց իր խնդրագիրը, որով խնդրում է, որ կոմիսսիայի մէջ մտնակցելու թոյլատրվին և բանտարներից պատգամաւորներ, ազատ ընտրութիւնով ջոկված։ Բացի դրանից՝ պատգամաւորութիւնը խնդրեց Շիդլովսկուց առաջարկել մի քանի գործարանների վճարել գործադուլի ամբողջ վարձագինը, գոնէ նրա կէսը։ Ն. Վ. Շիդլովսկին յայտնեց, որ ինչ էլ որ լինի՝ բանտարներից ընտրված պատուիրակներ կը կոչվեն մասնակցելու յանձնաժողովին երբ նրա զբաղմունքներն սկսվելու կը լինեն. իսկ ինչ վերաբերում է գործադուլի ժամանակի համար վարձագինը կամ նրա կէս ստանալու հարցին, այդ առիթով նա յայտնեց, որ դա չէ մտնում իր նախագահութեանը յանձնված կոմիսիային և խորհուրդ տուեց դիմել ֆինանսների մինիստրին։ (Русь)

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Գուցէ ոչ մի տարի ընդհանրապէս մեր նահանգի և մասնաւորապէս մեր քաղաքի ընդհանուր առևտրական տնտեսական կեանքում այսպիսի յուսահատ մեծ ճգնաժամ չէ եղել, ինչպէս այս տարի։ Թէ տեղական արդիւնաբերութեան արտահանման և թէ դրսի ապրանքների ներմուծման մեծ շրջանառութիւնն այս տարի այնպիսի մեծ չափերով չէ կատարվում, ինչպէս անցեալ տարիներում։ Առևտուրը բոլորովին կանգ է առել և փողը վճառականների կասսաներում դառել է սև աղուէս, բանկի վճարման ժամանակամիջոցների վերաբերմամբ փողի նեղութիւն են կրում այնպիսի առևտրական խոշոր ֆիրմաներ, որ դուրս միանգամայն մնում էք ապշած։ Մեր նահանգի առևտրական կեանքի միակ կենդանական զարկերակը, նեցուկը—բամբակի առևտուրը այս տարի խիստ ընկած է։ Կարծէք ոչ ոք դրա պահանջը չէ զգում, ֆիրմաները վերին ատիճանի սառնութեամբ են կպչում գործին, վերջին դէպքումն էլ իրանց պահում են խիստ զգուշաւոր։ Գները չը տանված կերպով ընկած են. ամերիկական ամենառաջին տեսակի ամենաբարձր գինն է 8 ք.—8 ք. 30 կոպէկ։ Դաւառներից բամբակի արտահանութիւնը դէպի քաղաքիս շուկան շատ նուազ է. անցեալ տարվայ առասպելական գները շլացրել են գիւղացուն, և սա էլ մի տեսակ քաղցրիկ ակընկալութեամբ սպասում է նորից գների բարձրանալուն։ Տնտեսական առևտրական կեանքի այսպիսի դրութիւն, ի հարկէ, առանց հետևանքի չէ անցնում. և ահա մնանկանում են կէս դարուց աւելի կեանք ունեցող ֆիրմաներ, չքանում են ասպարէզից խոշոր վաճառականներ—երկար ժամանակ խիստ ցրտեր լինելուց յետոյ, ահա երկու օր է, որ եղանակները բաւականին մեղմացել են, ամպերը քաշվել են երկնակամարից, և կարմիր արևը ցոյց է տալիս իր երեսը, օդը լցնելով մի առանձին ջերմութեամբ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Լուրեր խաղաղութեան մասին։ Պարիզից, փետրվարի 3 ից, հեռագրում են հետևեալը. «Երէկ երեկոյեան պատգամաւորների ժողովի կուլուարներում լուրեր էին տարածվել, որ սկսվել են բանակցութիւններ խաղաղութեան դաշն կապելու վերաբերմամբ Հեռաւոր Արևելքում և որ խաղաղութիւնը կը կապվի 2—3 ամսից յետոյ։ Սակայն այդ լուրերը պաշտօնապէս չէին հաստատված։» (Росс.)

Սեսսելի բացատրութիւնը։ «Standard» լրագրի թղթակիցը հաղորդում է Պորտ-Սաիդից այն երկարատև խօսակցութեան բովանդակութիւնը, որ նա ունէր գեներալ Ստեսսէլի հետ «Australien» շոգենաւի վրա։ «Times» լրագրի հաղորդագրութեան առիթով յունվարի 12-ից։ Այդ ամբողջ հաղորդագրութիւնը Ստեսսէլ մէկ մէկ հերքեց, իւրաքանչիւր հարցի վերաբերմամբ բերելով պաշտօնական փաստեր։ Այն հաղորդութեան առիթով, որ իբր թէ բերդում նշանաւոր պաշարներ կային, որոնք երեք ամիս բաւարար կը լինէին, Ստեսսէլ ասեց, որ անցեալ տարվայ հոկտեմբերից բերդապահ զօրքի իւրաքանչիւր զինուորին տրվում էր միայն օրական 3 ֆունտ հաց և 100 գրամ ձիու միս շաբաթական։ Ես խոստովանում եմ, որ ճիշդ է հաղորդագրութեան այն կտորը, որ ասում է, թէ Պորտ-Արտուրում գտնվում էին էլի 2000 ձիեր, բայց դրանք անհրաժեշտ էին ջուր և ռազմամթերքներ տեղափոխելու համար բաւական մեծ տաշածութեան վրա։ Այդ պատճառով անհնար էր այլ ևս ձիեր մորթել։ Նոյեմբերի վերջը շան մսի ֆունտը ծախվում էր 48 կոպէկով։ Ինչ վերաբերում է ալիւրին, բերդապահ զօրքը յիրաւի 60 օրվայ պաշար ունէր։ Կատարելապէս սխալ է այն տեղեկութիւնը, որ իբր թէ բրիտանական «King Arthur» շոգենաւը բերդի անձնատուր լինելուց մի փոքր առաջ 7000 տոն ալիւր է հասցրել, այն ինչ իսկապէս այդ շոգենաւը բերել է միայն 700 տոն ալիւր։ Ինչ վերաբերում այն բանին, որ իբր թէ բերդի անձնատուր լինելու ժամանակ նրա մէջ 25,000-ից աւելի առողջ և կռուի ընդունակ զինուորներ կային, Ստեսսէլի խօսքով, Պորտ-Արտուրի բերդապահ զօրքը երբէք 25,000 ի չէ հասել։ Ապրիլի վերջին, նախ քան ամբողջ ռուսական զօրքը Կվանտունեան թերակղզու վրա գործ սկսէր, Պորտ-Արտուրի բերդապահ զօրքը բաղկացած էր ընդամենը 19,688 մարդուց։ Պաշարման վերջը այդ թիւը կրճատվեց մինչև 5,978 մարդ, որոնք պէտքական էին կուելու։ Խոսակցութեանը ներկայ եղող օֆիցէրներից մէկը նկատեց, որ նա սկսել էր «Արծուի բունը» անուն կրող բլրի պաշտպանութիւնը 750 մարդով, իսկ երբ ստիպված եղաւ ամբողջ այդ բլուրը, իր տրամադրութեան տակ մնացել էին ընդամենը 17 մարդ։ «Times» հաւատացնում է, որ իբր թէ պաշարման ընթացքում անդադար ջոկներ էին գալիս Պորտ-Արտուր, որոնցից իւրաքանչիւրը 50 օրվայ ուտեստի պաշար էր բերում։ Ստեսսէլ այդ առիթով նկատեց, որ մինչև հոկտեմբեր, կարելի է, միայն 12 ջոկներ են եկել Պորտ-Արտուր Չիֆուից, բայց նրանք միայն հեռագիրներ էին բերում, և ոչ թէ ուտեստի պաշար։ Հոկտեմբերից յետոյ եկաւ միայն մի ջոկ։ «Times» լրագիրը թեթևամտութեամբ պնդում է, որ իբր թէ բերդը առատութեամբ բերվում էին ռազմամթերքներ, մանաւանդ պաշարման վերջին երկու օրը։ Ստեսսէլ այդ առիթով միայն նկատեց, թէ շատ դժուար է զօրքի ճակատի համար հարկաւոր քանակութեամբ ռազմամթերք հայթայթել։ Նոյեմբերի վերջում մնացել էին միայն 600 ռումբեր մեծ թնդանօթների համար. շրապնէլներ ամենևին չը կային, այն ինչ հենց այդ միջոցին էին անհրաժեշտ նրանք։ Ես խոստովանում եմ, որ կար էլի ռումբերի մի փոքր քանակութիւն, բայց նրանք չէին յարմարվում գործադրութեան համար պէտքական թնդանօթներին։ Անձնատուր լինելու պատճառները հետևեալներն էին. 1) ռազմամթերքների անբաւարար քանակութիւնը և 2) մարդկանց պակասութիւնը։ Արդէն սեպտեմբերին ինձ կատարեալ իրաւունք էր տրված անձնատուր լինել, երբ դա անհրաժեշտ կը լինի։ (Спб. А.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

8 փետրվարի

ՇԱՆԳՀԱՅ։ Որովհետև Ստեսսէլի կապած կապիտուլեացիայի մէջ անտես էին առնված խաղաղ բնակիչների շահերը, ուստի մեծամասնութիւնը զրկվեց իր գոյքից բերդից դուրս գալու ժամանակ։ Պորտ-Արտուրում ազգաբնակութեան ճանապարհ ընկնելու համար ոչինչ միջոցներ ձեռք չէին առնված և միայն մի ամսից յետոյ նրանք հրամանագրվեցին Շանգհայից։ Դալնիում կուտակված խաղաղ քաղաքացիների և գերիների դրութիւնը, առանց խտրութեան հասակի, սեռի, առողջութեան և հասարակական դրութեան, սառը, կեղտոտ, առանց կարասիքի բնակարաններում հաւասար էր անասնականի։ Նագասակիում, ուր ուղարկված են զինուորականները, վերաբերմունքը խիստ փոխվեց դէպի լաւը։ Շանգհայում, Պավլովի ու Դէսինոի, հիւպատոս Կլէյմէնովի և ծովապետ Գրիգորովիչի ժանակցութեամբ գործում է յատուկ յանձնաժողով, որ միջոցներ է ձեռք առնում բնակարան և կերակուր հայթայթել եկող պորտ-արտուրցիներին և Օդէսա ուղարկել նրանց։ Շանգհայը լցված է վատ հագնված ռուսներով, որոնք օտարազգիների վիրաւորական ուշադրութիւնն են հրաւիրում իրանց վրա։

ՊՕՐՏ ԼՈՒԻՍ։ Ռուսական էսկադրայի Նոսիբօ գտնվելու ժամանակ ռուսները ձեռք բերին ալիւրի և գետնախնձորի անագին պաշարներ։ Մէկ հակառականաւ և 6 ածխատար նաւեր կանգնած են դեռ Դիէգօ-Սուարէցում։

ԼՕՆԴՕՆ։ «Նօվոյեերմ», երբ Շանխայ հասաւ, յետ պահվեց ապահովագրական գործակալներից, որոնք նախամեծար են համարում վճարել տուգանք, քան ենթարկվել գրաւման վտանգին ճանապարհորդութեան ժամանակ։ Տէրերը շատ մեծ տուգանք պահանջեցին, ուստի շոգենաւը շարունակեց ճանապարհը և մի քանի օրից յետոյ բռնվեց եապօնացիների կողմից։

ՏՕԿԻՕ։ Բժշկական հաշիւներին նայելով եապօնացիները կորցրել են Խէյգօուտայի մօտ 342 սպանված, որոնց թւում 82 օֆիցէր, 8014 վիրաւոր, որոնց թւում 271 օֆիցէր և 526 անյայտ կորած։ 595 դուրս են եկել կազմից սառած լինելու պատճառով և վիրաւորների գրեթէ կէսը ազատվել են սառնամանիքից։ Շատ զինուորներ մեռնում էին արեան սառչելուց վէրքի շուրջը մինչև վիրակապումը։ Ենթադրում են, որ ռուսները աւելի սաստիկ տանջանք են կրում այն պատճառով, որ նրանց վիրաւորներին պէտք է փոխադրէին աւելի հեռու տարածութիւն։

ՊԱՐԻԶ, 7 փետրվարի։ «Տան» լրագրի թղթակիցը խօսեց լէյտընանտ Բերգի հետ, որ կենդանի էր մնացել այն պայթումից յետոյ, որից սպանվեց Կոնդրատենկօն։ Լէյտընանտը նկարագրեց գեներալի մահը. նա կանչվեց հեռախօսով № 2 ամրոցը. բոլոր օֆիցէրները հաւաքվեցին կազամատը. նրանք ողջունեցին գեներալին և բաժակ առաջարկեցին նրա կենացը։—«Աւելի լաւ է խմեցէք ձեր սեփական կենացը»,—պատասխանեց գեներալը և անմիջապէս այդ խօսքերից յետոյ տեղի ունեցաւ պայթումը։ Լէյտընանտ Բերգը հաստատեց, որ եապօնացիները կորցրել են Պորտ-Արտուրի մօտ 60,000 մարդ։ Նա պատմեց նոյնպէս, որ գեներալ Նոգին հրամայեց ուղղել թընդանօթները տատանվող եապօնական զօրքերի վրա, որպէս զի ստիպէ նրանց շտապով գնալ։

Կ. ՊՕԼԻՍ, 7 փետրվարի։ Սուլթանը պարգևեց Ստեսսելին Օսմանիէի շքանշանը ադամանդակուռ, իսկ տիկին Ստեսսէլին—Շէֆգատի շքանշանը։ Օֆիցէրները ստացան թիւրքական շքանշաններ։

ԹԷՕԴՕՍԻԱ, 8 փետրվարի։ Գեներալ Ստեսսելը փետրվարի 9 ին մեկնում է Պետերբուրգ. մնացեալ բոլոր օֆիցէրները ժամանակաւորապէս ուղարկվում են Վիլնայի գունդը։ Հիւրանոցում ազատ կացարաններ չը լինելու պատճառով, ընակիչները հաճութեամբ առաջարկում են եկածներին իրանց բնակարանները։ Բոլոր եկածները, բացի ծանր վիրաւորները, իրանց լաւ են զգում։ Տիկին Ստեսսէլին ներկայացրին փնջեր քաղաքային վարչութիւնից, Վիլնայի գնդի օֆիցէրներից և Կարմիր Խաչի կոմիտէից։ Դիմաւորումից յետոյ գոնացողական մաղթանք կատարվեց։ Գեներալ Ստեսսէլը, հանելով օֆիցէրների հետ, գնացին օֆիցէրների ակումբը։ Փողոցները լի էին բազմութեամբ։ Ուրաները ուղեկցում էին պորտ-արտուրցիներին մինչև ակումբը, ուր նրան նախաճաշ տուին։ Ստեսսէլը «ուրա» ողջոյններին դիմելով ժողովրդին, ասաց. «Պարոն քաղաքացիներ փառաւոր քաղաքի, Թէօդոսիայում մենք առաջին անգամ ոտք կոխեցինք ռուսական հողի վրա և ձեր դիմաւորումը մեր թանգագին հայրենիքում, ձեր մայրենի խօսքը թափանցեց իմ զինակիցներս և Պորտ-Արտուրի պաշտպանների սիրտը։ Ողջունում եմ ձեզ և շնորհակալ եմ»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական։ Փետրվարի 8 ի նիստում Մինիստրների կոմիտէը ամենից առաջ լսեց զեկուցումն այն մասին, որ Թագաւոր Կայսրը, ստատս սեկրետար Պոբեդոնոսցովի ամենանպատակօրէն զեկուցման վրա Սուրբ Սինոդի որոշման մասին, բարեհաճեց ամենաողորմածաբար յունվարի 29-ին հաճութիւն տալ՝ ազատել Սպասո-Եվֆիմիէվի վանքից աղանդաւոր գիւղացիներին։ Ապա շարունակելով խորհրդակցութիւնը աղանդաւորների հարցի մասին, կոմիտէը կանգ առաւ հին-ծիսային աղանդաւորների հոգևոր անձանց վիճակի վրա և քննեց նրանց իրաւունքներ տալու հարցը, կոչվել խորհրդատու կամ դաստիարակ և մասնաւոր ու հրապարակական տեղերում ծէսեր կատարել, օրինակ երդուեցնել իրանց դաւանակիցներին, հոգևոր մխիթարութիւն տալ մեռնողներին, կրօնի դասեր աւանդել դպրոցներում աղանդաւորների երեխաներին, այն պայմանով, որ կրթական որոշ ցենզ ունենան և պահեն մետրիքական մատեաններ հասարակական հաստատութիւնների կօնտրոլի տակ։ Ապա կոմիտեատը քննեց աղանդաւորների իրանց դպրոցներ բանալու և զանազան հրատարակութիւններ անելու հնարաւորութեան մասին ընդհանուր հիմունքներով, ինչպէս և քննեց այն հարցը, թէ կարելի է աղանդաւորներին հաւասարեցնել օտար քրիստոնէական դաւանութիւնների անձանց հետ պետական և հասարակական ծառայութեան իրաւունքների կողմից։

9 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 փետրվարի։ Արտասահմանից ժամանեց Մեծ Իշխան Պավել Ալէքսանդրովիչ և անցաւ դէպի Ցարսկոէ-Սէլօ։

ՄՕՍԿՎԱ, 8 փետրվարի։ Եաուզեան հիւանդանոցում գտնվող Անդրէյ Բուդինկին, Մեծ Իշխան Սէրգէյ Ալէքսանդրովիչի կառապանը, որը վիրաւորվել էր պայթիւնի ժամանակ՝ վախճանվեց օպէրացիայից մի քանի ժամ յետոյ։ Բուդինկին պահեստի ունտէր-օֆիցէր էր, 43 տարեկան, և 12 տարի կառապան էր Մեծ Իշխանի մօտ։

ՏՕԿԻՕ, 8 փետրվարի։ Ի նկատի ունենալով յարձակման վտանգը Վլադիվոստոկի վրա, ռուսները ամրացնում են Տումին գետի մանջուրական ափը։ Շախէի վրա շարունակվում է ապարդիւն հրաձգութիւն արտիլերիական թնդանօթներից։

ՊԱՐԻԶ, 8 փետրվարի։ «Ֆիգարօ» լրագիրը հաղորդում է, որ Հուլլի գործի վերաբերմամբ քննիչ յանձնաժողովի վճիռը կը յայտնվի շաբաթվայ վերջը։

ԼՕՆԴՕՆ, 8 փետրվարի։ Լոնդոնի կամաւորների ուժը կօրպուսների վերաբերեալ պաշտօնական հաշիւները ցոյց են տալիս, որ 1902 թւի յունվարին նրանց թիւը պակասել է 3000 մարդով։ Զինուորական մինիստրութեան փորձը՝ մեծացնել պատերազմական ընդունակութիւնը սաստկացած մարզութեան միջոցով, այն հետևանքն ունեցաւ, որ կամաւորների թիւը պակասեց։

ՆԻԻ-ԵՕՐԿ, 8 փետրվարի։ Երկաթէ հանքում, Ալաբամում երէկ տեղի ունեցած պայթիւնի ժամանակ ցուցակագրված են էլի 152 հանքագործներ։ Ընդունված է բիլլ, որով Միացեալ-Նահանգների նաւատորմի համար յատկացված է 98,914,350 դոլլար։

ԲԵՐԼԻՆ, 8 փետրվարի։ (Սեփ. թղթակցից)։ Գնդապետ Գէդկէ դատապարտում է Գրիպպենբերգին դիսցիպլինան խախտելու համար։ Գործունէութեան այդպիսի եղանակը ոչ մի տեղ տանելի չէր լինի։—Վիլհէլմ կայսրը իր ճանապարհորդութեան ժամանակ Մէկլենբուրգում կը ծովում կը հանդիպէ Մալտայում երևցած պրինց Աղալբերտին, որը կը վերադառնայ իր ճանապարհորդութիւնից, որ նա կատարել է երկու տարվայ ընթացքում պատերազմական նաւով Հեռաւոր Արևելքի ջրերում։

ՄՕՍԿՎԱ, 8 փետրվարի։ Անդրէյ կառապանը 70 ից աւելի վէրքեր ունէր, որ պատճառել էին ռումբի կտորները։—Կիևի Մ. Սվվա գնացքների երթևեկութիւնը դադարած է։

ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ, 8 փետրվարի։ Ծովապետ Եսէնի կրէյսէրեան էսկադրայի վրա կուի մէջ բոլոր վիրաւորված նաւատինները և առհասարակ նրանք, որոնք կարող են շարունակել ծառայութիւնը, վերադարձան իրանց նաւերը։

9 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դօփան զօրքի շրջանում խօլերայից հիւանդալու դէպքեր յունվարի 23 ից մինչև փետրվարի 4 ը Բասօվ ագարակում և Մօրոզովսկայա ստանեցայում հիւանդացել են 7 հոգի և մեռել են երեք հոգի։ Պետութեան ուրիշ տեղերում մի և նոյն ժամանակամիջոցում խօլերայից հիւանդանալու դէպքեր չեն ունեցել։ Վիատկայի նահանգում յունվարի 26-ից մինչև փետրվարի 4-ը նորից տեղի են ունեցել սիբիրական ախտից հիւանդանալու 32 դէպք։—Վլադիմիրում յունվարի 29 ից մինչև փետրվարի 4 ը հիւանդացել են տիֆով հինգ հոգի։—Մեծ Իշխան Պավել Ալէքսանդրովիչ փետրվարի 8 ին մեկնեց դէպի Մոսկվա։

ԼՕԴԶ։ Էլէքտրական ճանապարհի վարչութիւնը որոշեց բարձրել մեքենավարների և կօնդուկտորների դրութիւնը, աւելացնել ռոճիկները և կրճատել աշխատանքի ժամերը։ Վարչութեան մէջ հիմնվում է դրամարկղ հիւանդների համար։ Ենթադրվում է բանալ տարբական ուսումնարան ստորին ծառայողների որդոց համար։

ԲԱԳՈՒ։ Անընդհատ հրացանաձգութիւնը հայերի և մահմեդականների մէջ շարունակվում է։ Քաղաքում առևտուրը դադարել է,

դարձրեցին, հասատաք քիշերը, բոլորն և հերիսյանները, դեպքը է հանդիսացավ, դեպքը է ինչ-որ մի բան, որ ամբողջ աշխարհը գրավեց։ Դարձը ինքնին և գրավեց։ Ինչպես ասացինք, դեպքը ամենուրեք հանդիպեցին։ Ամենուրեք զարմացան։ Ամենուրեք զարմացան։ Ամենուրեք զարմացան